

# ԿԻՉՈՐՈՒՄԻ ՄԱՅՈՒՆ

Քաղաքային «Կոմսայրի» թերթի հավելված,

1991 թ. Ապրիլ: № 24: Գինը՝ 50 կոպ.



Վայի փողոցը երկրաշարժից հետո:

Լուսանկարը՝ Ս. Կուլյանի

## Պ ա Ր ա Ք ը կ ա տ ա Ր Ե ց

Լեյտենանտ Յուրի Կոնյուխովիի հետ ես ծանոթացա Երևանի «Էրեբունի» հիվանդանոցում: Այստեղ նա բուժվում է արդեն երկու շաբաթ: Իսկ այդ օրը՝ դեկտեմբերի 7-ին, նա գտնվում էր Լեհիսկայանի հիվանդանոցում:

— Հիվանդանոցի դիմաց դպրոցն էր, — պատմում է Յուրիին, — մի քանի զինվորների և հրամանատարների հետ միասին ծխում էինք մարզագետներ: Համկարձ տեսնում ենք, որ երևի հարկանի դպրոցական շենքը դանդաղորեն փլվեց: Առանց երկար մտածելու նետվեցինք օգնության:

Խիզախ հրամանատարը փլատակների տակից սկսեց դուրս բերել վիրավոր երեխաներին: Օտրը տառն անգամ կարողանում է ներս մտնել դպրոցի կիսաքանդ շենքը: Աճճնազոհարար էին գործում և մնացած զինվորները: Երկրաշարժի երկրորդ ցնցման պահին Յուրիին փլատակների մեջ էր: Եվ ինքը նույնպես մնաց փլվածքների տակ:

— Երբ Կոնյուխովին տեղափոխեցին մեզ մոտ՝ ծանր վիճակում էր, — ասում է բուժող բժիշկ Կ. Պետրոսյանը, — ձեռքերի և ոտքերի կտրվածքներ, ձեռքվածքներ կոնքազիտային ուկորների շրջանում: Պետք էր անմիջապես վիրաճատության ենթարկել: Այժմ նա սկսել է ստողանալ:

Լեյտենանտ Յու. Կոնյուխովը Վիտերակ քաղաքից է: Այստեղ նա ապրում նրա ծնողները: Մայրը՝ գործարանի գլխավոր ինժեներ, հայրը՝ պաշտոնաթող զինծառայող: Յուրիին հետևել է հոր օրինակին:

Ա. ՍԻԳԱՆՈՎ  
(ՏԱՄՍ-ի թղթակից)

ԳԱԳԻԿ ԽԱԶՐԿՅԱՆ

## ՀՈՒՅՍԻ ԵՎ ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԵԼԵՎԵՋՆԵՐՈՎ.

Ճիշեր կան զին մեր փողոցի վրա,  
Տեսրոցներ կան խուլ, լսու՛մ ես, լսի՛ր.  
Քաղաքում դու մեր, շատ զգուշ խոսիր.  
Սգավոր են ավեր մայրի՛քը նրա:  
Մարդկանց աչքերը տառնապանքի ահ,  
Ոճանք հողմածե՛ծ ծառի են նման,  
Վշտի արձան են, կոթող են համակ  
Եվ լացն է սոսառ սրտերում երանց:  
Մրժուռի մեջ լուռ մանուկ է՛ անում,  
Գլուխը՝ արև, աչքերը՝ ծաղիկ:  
Խաչմերուկներում խաչքար է հանում,  
Որպես բալասան՝ զրված մեր ցավին:

Ա

1  
Չահվաճների հողիները  
Հրեշտակի հետ են խոսում:  
Ես լսում եմ ձայնը նրանց,  
Լսում եմ լուռ ու սպասում:

2

Լսում եմ լուռ ու սպասում,  
Քե հրք պիտի իջնեն վերից  
Ու տազնապոս հարցեր տան ինձ  
Եղբրական այն օրերից:


3  
Ե՛րբ երկան այն օրերից  
Էլ ի՛նչ մնաց, ի՛նչը անցավ:  
Քե՛նեքստը՝ դուք հողի՛րից,  
Քե՛ հողի՛րից զու՛մարվեց ցավս:

4  
Ա՛խ հողի՛րից զու՛մարվեց ցավ:  
Թափառում ենք հարթածի պես:  
Ա՛խ, մեր հողի՛ն՝ մուրթ թուլուն,  
Որունում է ամենուր ձեզ:

5  
Որունում ենք ամենուր ձեզ,  
Որունում ենք ու շենք զանում:  
Լուսանկարն է զանձի պես  
Արցունքներից մեր տաքանում:

6  
Արցունքներով մենք տաքանում,  
Հուշի ծառն ենք ջրում այսպես  
Ու ողբի խոր ավազանում,  
Ինչզվում անխոս՝ ձկների պես:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



Ժամանակավոր բնակատեղ...  
Լուսանկար՝ Ս. Գուլյանի

**Մ Ա Ղ Ի Կ Ն Ե Ի Ը**

Ձեր աչքերի մեջ արցունք եմ տեսնում  
Արցունք եմ տեսնում հայոց ծաղիկներ,  
Ձեր սուրք երազներն էլ շկայացան  
Ձեր լեկուշ սրտում անդամ մահացան:

Հողմը բճարի արագ սլացավ  
Ու մի վայրկյանում դուր էլ մահացավ  
Դուր էլ բռնեցի՜ աշուն ծաղիկներ  
Ու իմ սրտի մեջ հավերժ մոխրացավ:

ԿՐԻԳՈՐ ԴՐՄԵՅԱՆ

**ՀՈՒՅՍԻ ԵՎ ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԵՎԷՋՆԵՐՈՎ**

(Սկիզբը՝ 1-ին էջում)

7  
Խեղդվում անխոս՝ ձկների պես,  
Ու ապրում ենք նրանց հանգուշն:  
Ոչ երկիրն է տանում մեզ վեր,  
Ոչ երկիրն է դառնում մեզ տուն:

8  
Ոչ երկիրն է դառնում մեզ տուն,  
Ոչ երկիրն է դառնում տանիք,  
Տվալուսանքի հորձանուտում  
Մենք զարձել ենք փրփուր-ալիք:

9  
Մենք զարձել ենք փրփուր-ալիք:  
Ցավի դաշտ է ծփում մեր մեջ:  
Կարեկցանքի բուշտ է բեկ-բեկ  
Լոկ արթնացնում արթնու տենդ:

10  
Արթնացնում է ապրելու տենդ  
Տեղ-տեղ անող գուլիք միայն,  
Ու մեր ճեղքված սրտի վրա  
Տար բալասան է դառնում այն:

11  
Տար բալասան է դառնում այն՝  
Մեզմա մարդկանց հոգու խորքից,  
Որ այս տանջված երկրի վրա  
Շարունակվի կյանքը նորից:

12  
Շարունակվի կյանքը նորից  
Ահասարսուտ իր երթերով:  
Մերը կրկին հողի հանի  
Իր փաղարուշ, նորը ձեռքերով:

13  
Իր փաղարուշ, նորը ձեռքերով,  
Սրազը մեզ երկիրնք տանի,  
Որ ազատվենք մենք ի վերջո  
Մղձավանջից այս ամենի:

14  
Մղձավանջից այս ամենի  
Ինչն է հոգին ապաքինում:  
Ա՛խ, գուլիք անդամ քիչ է, շնչին,  
Փշրված սիրտ չի կայցնում:

15  
Փշրված սիրտ չի կայցնում,  
Շոյում է սոսի ու հոտանում:  
Մենք մնում ենք ցավի հետ, որ  
Մրժում է ու թեժանում:

16  
Մրժում է ու թեժանում  
Հուրը մեռած մեր դոճերի,

Որոնց անմեռ հիշատակին  
Մենք մնում ենք խաչված գերի...

Բ  
Ու անցնում են օրերն այսպես,  
Աղուցվում են, դառնում շղթա,  
Կախվում են մեր պարանոցից:  
Տե՛ր, մեզ նայի՛ր, Տե՛ր, մեզ գթա՛:  
Ա՛խ, խեղդվում է մեկը անհույս  
Մղձավանջի նահիթի մեջ:  
Ինքնասպան է մեկը լինում  
Սև օրերի երթից անվերջ:  
Մեկը վառվել, մոխրացել է,  
Հետքն էլ չկա նրա մարմնի:  
(Միտ է պետք, սիրտ մարդկային, որ  
Դիմանա, շինելագարվի...)  
Գերեզման է մեկը շինել,  
Դիակ չկա քայք նրա տակ:  
Լուս ողորմ է հայրը անդոր  
Ու սիրտն է սև, մութ ու դատ:  
Շնչահեղձ են եղել ոմանք,  
Ոմանք՝ կորցրել միևնույն արև:  
«Սոցնոթյուն» են ոմանք կանչել,  
Ու չեն հասնի փրկարարին:  
Ա՛խ, նկարն է մեկը գտել,  
Ընտանիքն է զոհվել մեկից:  
Մայրը մտնական ամուր գրկել,  
Չի ապանել մահվան քիչից:  
Աշխարհի վերջն առնա տեսան:  
Ու մահ նկանք զմոխրի մեջ:  
Տառապանքում այս ու՛ր հասանք  
Փորձությանը ն՛րը կգա վերջ:

Իսկ վերջ չկա, վերջը ո՛ր է,  
Ամեն մի խոսք ողբի գուռ է,  
Ուր էլ գնաս՝ ցավը սուր է,  
Որ խրվել է մարդկանց սրտում,  
Աչքերի մեջ, հոգու հոգում, ...  
Չարչարում է ու չի հոգնում՝  
Չարչարում են ու չեն հոգնում՝  
Մրժուր ինք, ցավ ու կսկիծ:  
Մենք օրվա մեջ հանախ մեռնում  
Հարություն ենք անում կրկին:  
Ու ապրում ենք այսպես անգո,  
Մեռածների կյանքով նաև:  
Աստվածային նման վարքով  
Այս աշխարհում ս՛վ է ապրել:

(Շարունակվի)



### ՎԵՑԸ՝ ՄԵԿ ԸՆՏԱՆԻՔԻՑ

Այս խաղաղ ընտանիքը երկար տարիներ ապրեց փոքրիկ, անհարմարավետ բնակարանում: 1937-ի հունիսին կատարվեց նրանց վաղեմի երազանքը՝ տեղափոխվեցին մոր բնակարան: Եվ ինչ ինչ հնարաններ, որ այդ շենքը պիտի դառնար նրանց համար գերեզման:

#### ԼԱՄԻԿՑԱՆ ՆԱԶԻԿ ԼԱՎՈՐԻ

Ծնվել է Լեհիմակաճում 1928 թ. մայիսի 16-ին: Աշխատել է Չկալովի անվան կարի № 2 արտադրական միավորումում, աչքի է ընկել համառությամբ, աշխատասիրությամբ, պարզեատրվել է Կարմիր ստաղի շքանշանով, աշխատանքային հերոս էր: Վաղեմի է ընկերների սերն ու հարգանքը: Քույրների անցմանց հետո նա իրեն նվիրեց թոռնիկների դաստիարակությանն ու խնամքին:

#### ԼԱՄԻԿՑԱՆ ՍՈՒՐԵՆ ԼԵՎՈՐԻ

Ծնվել է Լեհիմակաճում 1919 թ. մայիսի 1-ին: Աշխատել է Լեհիմակաճի, ապա Թայիճի հրուշակեղենի ֆաբրիկաներում, որպես ցեխի վարիչ: Սուրեն Լեհիմակաճը Հայրենական

պատերազմի մասնակից էր, երկրորդ կտրգի հաշմանդամ:

Նա իր գործի մեծ վարպետ էր: Ծառակով ու գեղեցիկ էր զարդարում թիվածքները, հետաքրքրվում էր գեղարվեստությամբ, ընտանիքին նվիրված հայր էր: Սիրում էր երեկոները անցկացնել իր ընտանիքի հետ, պատմել իր իմացած պատմությունները:

#### ԼԱՄԻԿՑԱՆ ՄԱՐԻԱՄ ՍՈՒՐԵՆԻ

Ծնվել է 1955 թ. հուլիսի 27-ին, Լեհիմակաճում: Սովորել է ավարտել է Մ. Նալբանդյանի անվան № 11 դպրոցը, հետո Կուզնեցովի անվան № 14 պրոֆտեխնումնարանը, ստանալով տեխնիկական վերահսկիչի որակավորում, աշխատել է ռեզիստորների գործարանում որպես տեխնիկական վերահսկիչ:

Ծակատագիրը չկանցավ, որ Մարիամն ունենա իր անձնական երջանկությունը:

#### ԼԱՄԻԿՑԱՆ ԱՆԱԼԻՑ ՍՈՒՐԵՆԻ

Ծնվել է 1961 թ. դեկտեմբերի 21-ին, Լեհիմակաճում: Ամառիսն էլ քրոջ՝ Մարիամի մեծ սովորել է ավարտել է Մ. Նալբանդյանի անվան

դպրոցը, ապա նույն պրոֆտեխնումնարանը, նույն մասնագիտությամբ աշխատել է նույն գործարանում՝ որպես տեխնիկական վերահսկիչ, եղել է քաղաքային խորհրդի ժողովրդական պատգամավոր: Սիրում էր ասեղնագործել: Չար կամքով բախտի, չունցավ իր ընտանիքն ու երեխաները:

#### ՏՈՆՈՑԱՆ ՍԵՐԳԵՑ ՆՈՐԻԿԻ

Ծնվել է Լեհիմակաճում 1982 թ. սեպտեմբերի 3-ին: Փոքրիկ Սերգեյը շահմաստի դպրոցից մոր էր ստան վերադարձել ու սիրելի մորաքրոջ՝ Անահիտի հետ գրկախառնելով հետագալ կյանքից: Նրանից հիշատակ մնացին նրկարները, դպրոցական պալտակը ու այն գրեմական պիտույքները, որ նախօրոք գնված էին, չէ՛ր որ գալիք տարում նա դպրոցական պիտի դառնար:

#### ՏՈՆՈՑԱՆ ՍՈՒՐԵՆ ՆՈՐԻԿԻ

Ծնվել է 1987 թ. դեկտեմբերի 14-ին, Լեհիմակաճում: Ընդամենը 7 օր էր մնացել, որ այս սևաչ գեղեցիկ մանուկը դառնար մեկ տարեկան: Ծակատագրի չար դիպակով Սերգեյը ծննդյան օրը նրան գտան փրատակների



տակ, մորաքրոջ՝ Մարիամի գրկում: Եվ ինչու ծնվեց, եկավ աշխարհ, որ նույնիսկ աշխարհի չարն ու բարին, լույսն ու մութը չպետք է հասցնեք ճանաչել:

#### ՍԻՐԱՆՈՅՑ ԼԱՄԻԿՑԱՆ

#### ՄԱՐԻԱՄ ԼԱՎՈՐԻ ԴԱՋԱՆՉՑԱՆ

Ծնվել է 1928 թ. Մայկույ քաղաքում, բանվորի ընտանիքում: Չորս զավակների հայր էր: Ջողող բանվոր էր աշխատում կենտրոնական փոստատանը:

Մարտինը աշխատանքի, ընտանիքին նվիրված, հոգատար և լավ ամուսին էր: Զավակները պատմում են,

«Երբ երկրաշարժը սկսվեց, մենք հավաքվեցինք իրար գլխի: Հայրս չկար: Այդ պահին նա աշխատավայրում պետք է լիներ: Աճիցապես գնացին կենտրոնական փոստ, բայց նրան չգտանք: Ժամը յոթին միացն իմացանք, որ հայրս գնացել է Հաղթանակի պողոտայի շենքերից մեկը: Այդ մասին մեզ տեղեկացրեց հորը գործընկերը: Իսկույն գնացինք Հաղթանակի պողոտայի այն շենքը, որտեղ աշխատել են երեք ատաղձագործ բանվորներ, կապի արտադրական միավորման նկատիչը: Տեսանք շենքը՝ ամբողջովին փլված: Ըստ մեր ծանոթների պատմածի, հորս կես ժամ հետո տեսել են շենքի դիմացի գրոսպալու աթոռին պատ կեցրած, կիսամեռ փեճակում:



#### ՄԱՅՐ ԵՎ ԱՂՋԻԿ

#### ՌՈՒՇԱՆՆԱ ԼԻՊԱՐԻՑԻ ՏՈՆՈՑԱՆ ԱՆՈՒՑԻԿ ԼՏՈՎԱՑԻ ՏՈՆՈՑԱՆ

Դեռ պիտի ապրեր Ռուզաննան, որի մարական սիրտը, ինչպես հազարավորներից, փ էր հավատով, իղձերով, երազանքներով... Նա ծնվել էր Անիի շրջանի Բարդու գյուղում: Ամուսնացել էր Լեհիմակաճում, աշխատանքի անցել «Հաղեկտրակոնոնմաս ո ս թ» արտադրական միավորումում,

Լավ աշխատող էր, հարգված կոլեկտիվի կողմից: Ռուզաննան զոհվեց տանը, երիտասարդ էր, առջևում՝ չապրված կյանք... Անուշիկը... Գեղաչ, բնորոշ Անուշիկը...

Սովորել է № 15 դպրոցում: Լավ աշակերտուհի էր... Աղետը նրա հետ էլ հաշվի չմտեց... Տարերքի անեղ հարվածներից նրանց բնակելի շենքը փուլ է կալ և գեղեցիկ այս աղջիկը զոհվեց մոր հետ միասին:

#### ԳՅՈՒՆԱՑՑԱՆՎԵՐ

#### ՄԵՐԱ ԱՂԱՍԻ ԳՅՈՒՆԱՑՑԱՆԸ ԾՆՎԵԼ Է 1929 թվականին:

Աշխատում էր «Ավանգարդ» ինստիտուտում որպես էլեկտրիկ: Դեկտեմբերյան արձակուրդից, ինչպես հազարավորներից, նրան էլ չխնայեց:

Միակ որդին՝ ԱՂԱՍԻ ԳՅՈՒՆԱՑՑԱՆԸ ծնվել էր 1965 թ. հունվարի 19-ին: Սովորել էր № 10 դպրոցում, Այնուհետև ծառայել խորհրդային բանակում, Խաբարովսկում: Երբ աղքատ հետո տարան, ծնողները քիչ էր մնում խելագար վերն: Երեք աղջիկներից հետո նա միակ տղան էր և առաջին անգամ էր հետո գլու

նելում ծնողներից: Նաև Աղասին այնպիսի նամակ էր էր գրում, կարծես հանգստյան տուն էր գնացել: Կախարհաբանական ձևով հանգստյանում էր հարազատներից, մեղմում նրանց մտահոգությունը: Վերադառնալով՝ գործի անցավ կարի միավորումում, աշխատեց որպես խոհարար: Աղասին այստեղ էլ զոհվեց: Սկզբում նա հասցրեց ստաշին ցնցումից հետո դուրս գալ, բայց նրանից լավոր աղաչակները նրան հորից հեռու դարձրին: Եկավ, որպեսզի փրկի մարդկանց, բայց զոհվեց երկրորդ ցնցումից: Աղասին էր Աղասին, բավական էր մեկը՝ օգնության կարիք ունենար, իրեն չէր խր

նայի: Եվ զոհեց իր երիտասարդ կյանքը ընկերներից փրկելու համար: Այժմ մայրը մեղացել է մորը՝ ստանց որդու կենդանի հիշատակի, գոն մեկ երեխա ունենար, որ մնար հիշատակ:

Թոռնիկը՝ ԳՅՈՒՆԱՑՑԱՆ ԱՂԱՍԻ ԳՅՈՒՆԱՑՑԱՆԸ, ծնվել էր 1973 թվականին: Սովորում էր № 10 միջնակարգ դպրոցում, գերազանցիկ էր: Դպրոցում սովորելու ընթացքում ընդունվել է ավարտել էր № 3 երաժշտական դպրոցը: Երազում էր ընդունվել մանկավարժական ինստիտուտ, դառնալ ուսուցչուհի: Ավագ... 9-րդ դասարանում էր սովորում և այդպես էլ մնաց ընդմիշտ դպրոցական...

Հ Ա Վ Ե Ր Ժ Ն Ո Ր Ա Պ Ս Ա Կ



Սիլվա, իմ անձնան քույրիկ, չէ՞ որ դու բարի էիր ու կամեցող, ինչո՞ւ արդքան դա-

ՍԻԼՎԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ  
Պատմում է քույրը

Ժամ և անողոր եղավ կյանքը քո նկատմամբ: Գեղեցիկ էր իմ Սիլվան, հմայիչ: Իր անձնան հայացքով ու բարի ծիծաղով ջերմացնում էր մայրիկի անձամոթին: Ժպտերես ու աշխույժ, խոսքաշատ ու հետաքրքրասեր էր նա: Հարգված ու սիրված էր, ուներ չափազանց բարի սիրտ, առանձին ջերմությամբ էր կապված եղբայրների՝ Հակոբի ու Համլետի հետ: Սիրում էր, շատ էր սիրում ծաղիկներ: Առանց վարդերի կամ մեխակների

տուն չէր վերադառնում: Սիլվան սովորել էր ՆՈ 4 դպրոցում, ուներ երաժշտական կրթություն, քանոնախար էր: Քույրիկս ամուսնացավ ինչպես քույրը, արցունքն աչքերին: Եկավ և այն օրը, երբ Սիլվային տարան ծննդատուն, և նորից՝ արցունքն աչքերին: Քույրս մայր դարձավ, երկու օր ծիծաղում էր ամոթխած, այո, երկու օր: Ընդամենը երկու օր տեսավ, շուրջ փառաք շնչ ու կերակրեց իր ձագուկին...

ՌՈՒՋԱՆ

ՍԱՄՎԵԼ ՌԱՃԻԿԻ ՊԵՏՐՈՎ  
ԾԱՆԸ ծնվել է Լեհիմակում, 1962 թ. հունիսի 2-ին: Աղայանի անվան միջնակարգ դպրոցն ավարտելով, սովորել է ՆՈ 49 պրոֆտեխտումնարանում, ձեռք բերել ռադիո-հեռուստացույց նորոգողի մասնագիտություն: Բանակային ծառայությունից հետո վարորդ է աշխատել շտապուժօգնության կայանում: 1986 թվականից մինչև ողբերգության օրը աշխատել է ՆՈ 2984 ավտոշարժային վարորդ:

կրթությունը շարունակել է բջջակական ուսումնարանում: Ստոմատոլոգիական պոլիկլինիկայում բուժքույր էր աշխատում: Ծառերն են հիշում՝ Նա թիմեին բարի ծախսը դեմքին, երբ շտապուժօգնություն սենյակ էր հրավիրում այցելուներին:

Եվստատագիրը ընդամենը 20 գարուն էր նախատեսել այս սիրունատես աղջկան: Կարճ ապրեց, սակայն սեր ու հարգանք թողեց բարեկամների, հարազատների, ընկերների սրտում: Նարինեի պատրաստած տորթերը աչքի էին ընկնում ոչ միայն ձևավորմամբ, այլև յուրահատուկ համով: Նարինեն մահ նուրբ ու գեղեցիկ անեղնագործել գիտեր: Հազիվ հասցրեց ավարտել ձեռքի գործերը: Մոխրոտն էր այն պահին, երբ գիշերով փախչում էր պալատից, կոշիկը թողնելով աստիճաններին: Տեսնողները գարմանում էին այդ աշխատանքի ճաշակի, նրբության, գույների համադրության համար:

Այս երկու հրաշալի էակները ծնվեցին նույն ամսին, կյանքից հեռացան նույն ամսին, նույն օրը, գրկախառնված: Նրանք համատեղ ընդամենը մեկ ամիս սուրբեցին:

Մարդամոտ բնավորության և աշխուժության համար Սամվելին քույրն էին սիրում: Նա իր ուրույն տեղն ուներ տանը, դիրսում, շրջապատում և ամենքն էին նրան լավ բնութագրում: Իսկ աշխատանքային ընկերները գեղեցիկ արտաքինի և գանգուր մազերի համար «Փնջ» էին անվանում: Հիմա էլ շատ ու շատ ընկերների սրտում թարմ է Սամվելի հիշատակը: Ծառերն են այցելում «Փնջույին», թարմ ծաղիկներ տանելով հավերժ նորապսակ մնացած գույզին:

ՆԱՐԻՆԵ ՌԱՃԻԿԻ ԱՍՐԳԼՍՅԱՆԸ ծնվել է 1968 թ. հունիսի 25-ին: Մաշտոցի անվան դպրոցն ավարտելով,



ՄԳՎԵԼ Է 1968 թ. Լեհիմակում: Սովորել է Լև Տոխտոյի

ԷՎԻՐԱ ՎԻԿՏՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

անվան ՆՈ 22 դպրոցում, այնուհետև ուսուցչի շարունակել է ՆՈ 89 ուսումնարանում, որը ավարտելուց հետո աշխատանքի է անցնում գույպեղենի ա/մ կոտորն արտադրամասում: Ծուռով լրանալու էր ներառ 20 տարին, սակայն կտրուկն ար կյանքի թելը: Աշխատավայրը դարձավ ներքին գերեզման: Նրա մահը ցնցեց ամենքին: Ոսկի ձեռքեր ուներ Էվիրան, շունչ էր տալիս թելերին, սիրում էր գործել նազործությունը: Այժմ նրա գործերը զարդարում են տան պատերը՝ կարծես զգացնել

տալով նրա գոյությունը: Կիսատ մնաց նաև մահացած հորեղբոր դիմամկարը: Արյունով լցված այդ օրը նա ուշանում էր աշխատանքից: Առաջինը մայրը տեսավ փլատակներ դարձած գործարանը... Մեկ ժամ չարչարվելուց հետո հայրն ու եղբայրները գրտան Էվիրային: Նրանք թրվում էր, թե նա արդեն փրկված է: Երգում էր, համբուրում հարազատներին, սակայն չդիմացավ... 10 ժամ անց փակեց աչքերը, հավետ թողնելով հարազատներին արցունքների մեջ:

ԱՆԺԵԼԱ ԳԵՎՈՐԳԻ ԱՄԻՐՆԱՆՅԱՆ

Էր Գ. Գուրյանի անվան (ՆՈ 28) միջնակարգ դպրոցը: Երի տասարը, կյանքի շեմ նոր ոտք դրած Անժելա Ամիրխանյանը 1978 թ. անդամագրվեց գույպեղենի ա/մ ՆՈ 2 գործող արտադրամասին: Հետաքրքրասեր Անժելան չէր բավարարվում միայն արտադրությունով: Առանց արտադրությունից կտրուկվելու, 1980 թ. նա ընդունվեց ԵրԳԻ-ի Լեհիմակյանի մասնաճյուղի երեկոյան բաժնի մեխանիկական ֆակուլտետ: Անժելան ամենուր աչքի էր ընկնում բնատուր կազմակերպիչ ծուրյամբ, մարդկանց որևէ

լավ գործով օգտակար լինելու ազնիվ մղումով: 1987 թվականից աշխատում էր կարի արտադրական միավորումում: Ընտանիքում օրինակելի կին էր, սիրասուն մայր: Չորսամյա Լիլիթի և 2 անտակամ Լիան մայի մանկական թոթովանքներն ու անմեղ ծախսերը ներառ աշխարհն էին: Իր լույս աղբյուր՝ ԼԻԱՆՆԱՅԻ հետ էլ Անժելա Ամիրխանյանը, զոհ զբնաց բնության խոլ տարերքին, «Ընտանիքում» յուրաքանչյուր բարձրահարկերից մեկում:

ԲԱԳՐԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ



ՄԳՎԵԼ Էր 1961 թ. Լեհիմակում: Սովորել է ավարտել

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՎԱՐԴ ՄՏԱՆՆԻԿ

ՄԳՎԵԼ Է 1968 թ. Լեհիմակում: 20-ամյա սիրուն աղջնակ էր: Սովորում էր Լեհիմակյանի ՆՈ 3 դպրոցում, այնուհետև՝ հաշվապահական տեխնիկումում: Կենսախիմի աղջիկ, բարու թյան մարմնացում, ինչ իմա մայի, որ քո կյանքի գարունը տերևաքափով էր սկսվելու... 2ին ուզում հավատալ, որ ընդմիջու ես հեռացել, թրվում է, ուր որ է կրացվի դուրը և կյանքով լիքը, ծախսով ներս կմտնես, կխառնես տունըս. գրքերս, թղթերս, կյանքըս, հոգիս...

Ավարդ, քույր իմ մազելի, չհասցրիր մայրանալ ու ճաշակել մայրության քաղցրությունը, ինչքան սեր ու նրազ կար քո հոգում: Իմ բարի քույրիկ, անմոռաց էակ...



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՍԵՈՒՆ ՍԵՂՈՒԿԻ

ՄԳՎԵԼ Է 1980 թվականին: Աշխատում էր Չկալովի անվան կարի ՆՈ 2 ֆարիկայում: Կյանքին նայում էր պայծառ հավատով: Բարի էր, մարդասեր, ազնիվ, պարտաճանաչ... Սիրում էր կրանքը, բարին ու լավը: Ապրում էր ուրիշի ուրախությամբ ու վերջ մեկ ուզում էր ամեն լավն ու բարին սիրել շուրջը: Դեռ քաղցում երազներ ուներ իրագործելու... Բաց... ախաղ...

Գաժան արհավիրքը փշրեց ամեն ինչ ու երազ, փլատակների տակ մնացին փաղկապված հույսեր, գորովանք ու հավատ, սեր ու կարոտ: Ի՞նչ իմամար, որ իր սիրած աշխատավայրը, ուր 25 տարի շարունակ աշխատել էր, պիտի փլվեր իր գլխին, որ այլևս չպիտի տեսներ իր սիրելիներին, որ այլևս չպիտի ծպտար, չպիտի զգար գարնան հեքը... Որ իր հարազատների սրտերը ցավով պիտի լցվեր...



ԳԱՅԱՆԵ ՌԱՃԻԿԻ ԳԱՍՏՅԱՆ

ՄԳՎԵԼ Է Լեհիմակում, 1968 թ. փետրվարի 17-ին: Ուրախ կրթությունը ստացել է Մաշտոցի անվան դպրոցում: Սովորել է Ա. Մոսկովյանի անվան մանկավարժական ուսումնարանի նախադպրոցական բաժնում: Երեխաները Գայանեի տարերքն էին: Ցուրաքանչյուր անձանոթ երեխա առաջին շիրտից կապվում էր նրան: Հիմնական աշխատա-

վայր չի ունեցել, փոխարինել է մի շարք մանկավարժներում, քայքայ անաչվել, արժանացել է ծնողների հարգանքին:

Գայանեն ընդամենը մեկ տարվա հարս էր: Լավ տնտեսուհի էր, տիրապետում էր կարունեին, ասեղնագործությամբ:

Երկրաշարժից ընդամենը 3 ամիս առաջ Գայանեն միանգամից երեք ծանր փիրահատություն էր տարել: Հարազատների ուրախությանը չափ չեկար. «Բեզ այլևս ոչինչ չի պատահի»: Իսկ ողբերգությունը առջևում էր:

5-ամյա եղբորը՝ Գագիկին անձամբ էր խնամել ու մեծացրել: Ասում էր՝ «Տեսնես իմ երեխային կսիրես այսպես»: Ապաստում էր նրեխային: Փոքրիկի համար շապիկներ էր ասեղնագործել:

Աղետից շենքն այրվում էր: Գայանեն չկար ու չկար: 8-րդ օրը գտան: Ինչո՞ւ մեղմել այս սևաչյա գեղեցկուհու ծնողների վիշտը: Ընդամենը մի քուսարաց և այսքան կորուստ, այսքան մրմուռ ու արցունք:

ՍԵՂԱ ՌՈՒՅԵՐՏԻ  
ՀԱՎՈՐՑԱՆ



Ծնվել էր 1954 թ. փետրվարի 24-ին, Ալյոսյի երկրամասում: Երեք տարեկան էր Սեղան, երբ տեղափոխվեցին Լեւոնական: Այստեղ էլ հաճախում է ՆՁ 29 միջնակարգ դպրոցը. որն ավարտելուց հետո աշխատում «Հելեոթրակեն

ցադասար» գործարանում: Սեղան ամուսնացել էր 1976 թ.: Երկու երեխաների մայր էր և մեծ հույս էր կապում զավակների հետ: Ծառ էր ուրախացել իր նորակառույց բնակարանով, սակայն... Մոխիրների վերածված Ծիրակացի 3-րդ թաղ., 10 շենքի փլատակների տակից չգտնվեց նույնիսկ Սեղայի աճյունը:



ՆԱԼՉԻՐՈՎ ԱՆՔԱՆԱՋԻ  
ՄԿՐՏՁՅԱՆ

Ծնվել է 1928 թվականի սեպտեմբերի 28-ին, Ախուր-

յանի շրջանի Հայկական գյուղում: Ծնված էր այն քոլոր գեղեցիկ հատկանիշներով, որոնք զարդարում են մարդուն՝ բարությունն ու համեստությունը: Ամբողջ կյանքում զբաղվել էր շինարարի շնորհակալ ու պատվարներ աշխատանքով, Բոլորի կողմից սիրված ու հարգված մարդ էր «Նստա Նազիրովը»: Կյանքի զիջավոր նպատակն էր համարում տեսնել իր զավակներին շարժրագույն կրթություն ըստացած:

Կատարվեց հոր երազանքը: Երեխաները ստացան բարձրագույն կրթություն, անցան աշ-

խատանքի: Կարծես մի մեծ ծանրություն ընկավ հոր ուսերից: 1988 թվականի դեկտեմբերի 7... Անվանի շինարարին կանչել էին «Հելեոթրակեն» նոր համաձայն գործարան: Բոլորի համար հարազատ մարդը զոհվեց աշխատանքի վաղրում՝ մեծ վիշտ պատճառելով հարազատներին, զավակներին, հատկապես կրտսեր որդուն: Սիրելի հայրիկը չիմացավ, որ աղետը ստիպեց որդուն թռչել 2-րդ հարկի պատհանից և փրկվել:

Նազիրովին գտան 10-րդ օրը՝ ծննդագրքի «մազան» ձեռքին...



ՄԱԼՆԱՅԱՆՆԵՐԸ

ՌՈՋԱ ԼԵՎՈՆԻ ՄԱԼՆԱՅԱՆՆԸ ծնվել է 1932 թվականին: Երկար տարիներ աշխատել է կարի արտադրական միավորումում. հետագեղ է կարողի մասնագիտությունում: Ահա ինչու նրա ուսերին է դրվել արտադրական ուսուցման հրահանգի պարտականությունը, Գործընկերները սիրում և հարգում էին նրան լավ բնավորության և մասնագիտական

խոր գիտելիքների համար: Մոր ուղիով գնաց և նրա մասնագիտությանը տիրապետեց նաև դուստրը՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԼԵՆՈՒՆՎԻԻԳԻ ՄԱԼՆԱՅԱՆՆԸ: Միասին էին աշխատում, միևնույն ձեռնարկությունում: Ստանանան ծնվել է 1957 թվականին: Ավարտել է ՆՁ 6 միջնակարգ դպրոցը: Ռոզան և Ստանանան զոհվեցին միասին՝ տանը:



ԱՐՄԵՆՈՒԶԻ ԼԵՎՈՆԻ ԿԻՐԱՎՈՍՅԱՆԸ ծնվել է 1962 թվականի փետրվարին, Սոփոկի և ավարտել է պոլիտեխնիկական ինստիտուտը, աշխատում էր քաղաքի «Մանկական աշխարհ» հանրախանութում: Իբրև ինժեներ, Ամուսնացել էր իր գործընկերոջ հետ, երկու զավակ ունենալով: Լենան և Վարդգեսը, Շատ բախտավոր էր համարում իրեն, բախտավոր ընտանիքում, սիրված ամուսնու և երեխաների հետ: Սիրում էր կյանքը, զոհ էր աշխատանքից, հարգված էր ընկերների շրջանում: Կյանքում, մարդկանց մեջ, առհասարակ շրջապատում միշտ լավն էր փնտրում, լավը գնահատում: Արմենու-

հին իր սրտաբաց մպխտով բարութուն, վստահություն էր ներշնչում բոլորին: 26-ամյա Արմենուհին լի էր ապագայի հույսերով, երազում էր երեխաներին տեսնել լավ դաստիարակված և երջանիկ: Միշտ իր ընտանիքին ու երեխաներին էր փարվում: Նրանցով երջանիկ Արմենուհին այդ գործընկերներին: Ծակատազրի բերումով Արմենուհուն այցելած մայրը՝ ՌԻՄԱ ԿԻՐԱՎՈՍՅԱՆԸ էլ կիսեց իր զրստեր և թոռների շար բախտը: Տան փլատակների տակ մնացին մայրը, Արմենուհին, երկու տարեկան ոսկեծամ ԼԵՆԱՆ, հազիվ մեկ տարին բոլորած ՎԱՐԳԵՍԸ:

ԿԵՍ ԴԱՐ ԵՎ ՄԵԿ ՕՐ

Կարճ, բայց իմաստային կյանքով ապրեց ԱՍՅԱ ՍԵՐԳՈՒՆԻ ԷԼԲԱԿՅԱՆԸ: Ծնվել է 1938 թվականի մարտին, Լեւոնականում: Սովորել է թեթև արդյունաբերության տեխնիկումում և աշխատանքի անցել գույպեղենի արտադրական միավորման կոտորոն արտադրամասում: Արտադրության առաջավորների թվում էր, շատերի վարպետ-դաստիարակը, նա նախքան ու սիրված ողջ կոլեկտիվում: Այդ օրը մի կանխագայում հուշում էր, ստիպում չգնալ աշ-



խատանքի, բայց չկարողացավ... Եվ մահկանացուն կնքեց ձեռնարկությունում:

դում: Ջերմ ու նվիրված մայր էր իր 3 զավակների համար: Երկար տարիներ աշխատում էր «Հելեոթրակենցադասար» գործարանում: Սիրված ու հարգված էր ողջ կոլեկտիվի կողմից, ընկերների ու հարևանների շրջանում: Երջանիկ էր ապրում նրա ընտանիքը Հովսեփյան փողոցի ՆՁ 2 շենքում: Կատարում առաջիններից մեկն էր, որ խիստ անհանգստանում էր վթարային շենքի փլուզվելուց: Անընդհատ դիմում էր մոսկովյան շրջափոխիչին՝ նոր բնակարան հատկացնելու կարակցությունը: Բնակարան տրվեցին... «Երանկյունի» թաղա մաս... Մի տեսակ սիրտը չէր

կաշում նոր տանը, վախենում էր. «Հանկարծ, որ երկրաշարժ լինի, ինչպես պետք է փախչեմ վեցերորդ հարկից», անընդհատ կրկնում էր նա: Այնուամենայնիվ հարյուրեց, գեղեցիկացրեց նոր բնակարանը: Մեծ հույսերով ու երազանքներով սպասում էր, որ շուտով կամուսնանա կրտսեր որդին և տունը կլցվի երեխաների ուրախ կարկաշով: Բայց երբեք... Էլ թերահավատորեն սասում էր որդուն. «Ես ոչ էլ կտեսնեմ քո ամուսնությունը»: Այդպես էլ եղավ: Ամեն զննվեց բազմաթիվ շենքը... ՍՈՒՍԱՆԱ ՄԿՐՏՁՅԱՆ



ԿԱՏՅԱ ԱՐՄԵՆԱԿԻ  
ՄԿՐՏՁՅԱՆ

Ծնվել է 1938 թվականի դեկտեմբերի 1-ին, Ախուրյանի շրջանի Բայանդուր գյու-

Մեք հաճախ և անտեղի շեռայում ենք լավ խոսքերը, իսկ օրինակելի մեկի մասին արտահայտվելիս քառերը այնպես մաշված ու «ամկարող» են լինում: Այդպիսի մարդ կանցից էր Կարապետ Աուրիլյանը: Նա մարդ էր, ումից ընկերներն ու մատաղ սերունդը պետք է օրինակ վերցնեին: Սովորել էր Երևանի մանկավարժական ինստիտուտում: Կիսատ թողնելով ուսումը, շտապել էր ուսգմանակատ՝ հայրենիքի հանդեպ պարտքը կատարելու: Վերադարձել էր շրջանում: Հետո շարունակել էր ուսուցը: Իմաստալուստ ավարտի-

լուց հետո ընդունվել էր կաթնաբրդյունաբերական տեխնիկում: 30 տարի անընդմեջ Կարապետն աշխատել էր ՆՁ 14 պրոֆտեխնուստմարանում: Ամբասիր աշխատանքը, շրջապատի նկատմամբ ստանալով հարգանքը ստիպել են, որ նրան ճանաչողները միայն բարի ու լավ խոսքերով արտահայտվեց նրա մասին: Անդեռ օրը Կարապետը տանն էր: Նա զոհվեց, սակայն փրկեց թոռանը՝ փոքրիկ Կարենին: Հարազատները սգում են ընտանիքի մեծ նախափետի մահը:



ԿԱՐԱՊԵՏ ԿԱՐԱՐՈՒԿԻ  
ԱՌԱՔԵԼԵԱՆ

Ծնվել է 1918 թ. Անիի շրջանի Լուսադրուր գյուղում:

թ. դեկտեմբերի 18-ին: Սովորել է Նեկրասովի անվան դպրոցում, որից հետո կրթությունը շարունակել է ՆՁ 3 միջն. պրոֆտեխնիկական ուսումնարանում: 1975 թ. աշխատել է կոշիկի ֆաբրիկայում: Այստեղ և գտնվում էր երկրաշարժի օրը: Ամուսնացած էր, ուներ երկու երեխա՝ տղա և աղջիկ: Ապարտալը կատակասեր, ուրախ և անհող բնավորություն ուներ: Ամբողջ կյանքում ծիծաղել էր, նույնիսկ սարսափելի մահը շաղախալեց կամ անարեկեց նրա ծիծաղկոտ

դեմքը: Թվում էր նա քնած, կենդանի, թվում էր, թե կարծես ուր որ է ոտքի կկանգնի և ծիծաղելով կասի, թե դա իր հերթական կատակներից մեկն է: Բայց մահը կատակել չի սիրում և հավետ լռեցրեց նրա գրնգուն ծիծաղը: Թող այնու երբեք աշխարհում երկրաշարժ չլինի և թող ոչ մի կին չաչրիանա: Իր սիրելի ամուսնուց կնոջը մընացին կյանքով լիցուն, ծիծաղկոտ նկարները և մի քանակ՝ դրոշմված տասպանարարին...



ԿԻՐԱՎՈՍՅԱՆ ՄՊԱՐՏԱԿ  
ԱՎԵՏԻՔԻ

Ծնվել է Լեւոնականում, 1956





Նախագգացում, հիշում է մայրը

ԱՆՃՆԻՑ ՌԱՖԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Անճախուս ծնվել էր 1972 թ. սեպտեմբերի 25-ին, Անճախում: Զուգակիս մեծ ապագա էր խոստանում նրա մեծ սերը դարձրել և ուսման, հակումը հասկանալու քիմիայի մկատմամբ: Եվ երազում էր ընդունվել ինստիտուտ, դառնալ քիմիայի մասնագետ:

Գնկոմների 7-ի առավոտյան Անճախի եղբայրը խնդրեց նրան, թե դասի մի գրանա, վատ երազ էմ տեսել, «Երկինքը մթնել էր, ես ձեռքիս մի եղևնի ունեի, վրան մի կարմիր խճճոր: Վազում էի փողոցով: Գնտիմը պատռվում էր և ուժեղ դողում, փոշին խեղդում էր, բայց նա վազում էի, մեկ էլ՝ «Միկոմեկտրաշարժիչ» գործարանի պատերը փլվեցին և ես դուրս եկա: Լույսը տարածվել էր չորս կողմը, բայց եղևնին այնպես չկար ձեռքումս: Երազը պատմելուց հետո, եղբայրը մեկ անգամ էլ խնդրեց, որ Անճախի տղան դասի, իսկ նա հրաժարվեց, ասելով՝ «Առանց այն էլ թվանշան չունեմ, քառորդըս ո՞նց պիտի փակեմ»: Երեք անգամ շուտ եկավ աստիճանների վրա Անճախից, վիզը ծառած, նայեց ինձ և ասաց. «Մամա ջան, ես գնացի»: Դրանք նրա վերջին բառերն էին, որ ասաց ինձ: Եվ այդպես էլ քառորդը չփակվեց... Սովորում էր 8-րդ դարձրելի 10-րդ «Ա» դասարանում և զոհվեց սիրելի դասղեկի ձեռքը թռնած, գրիչը ձեռքին...



Ի ԽՈՐՈՅ ՍՄՏԻ

Խոր վշտով ու ցավով եմ գրում քո մասին, իմ սիրելի ու անմոռանալի ամուսին, սիր վաճ որդի, մեղմ ու բարի հայր, բացառիկ անճախորություն ու ՄԱՐԳ, ՎԻՎԻԿ ՎԱՐՍԱԶՂՅԱՏԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ծնված 1948 թ.:

Ողբում եմ քո մահը, որը կտրեց մեր երջանիկ ու բախտավոր միասնության թելը: Մեռավ մեր երջանկությունը՝ իր հետ տանելով անվերադարձ ու անկրկնելի գեղեցիկ հուշերը: Ամեն ինչ ընկղմվեց խավարի մեջ, կյանքը, որ դու այնքան սիրում էիր, դարձել է անշուք ու անհրապույր, մեռալ ու ցուրտ: Անճուկ ցավը խեղդում է ինձ ու կարոտը տանջում է անվերջ:

Բայց ապրում եմ քո վատ հուշերով, տոկում եմ, որ մեծացնեմ զավակներդ: Ինձ հետ տատապում ու տանջվում են ձեր ու վշտահար մայրդ, ցավից կքած հայրդ: Թախծում ու տխրում է փոքրիկ Գոռիկը, որի կարոտն էլ սառման չունի:

Անճախյան, բարձրամասնակ, գանգրահեր ու սևաչ էր ամուսինս, ծախտը միշտ դեմքին, որն ավելի էր գեղեցկացնում նրան: Աշխատում էր գույպեղենի արտադրական միավորումում, որտեղ էլ դարձավ երկրաշարժի անմեղ զոհ: Հենացավ՝ անավարտ ու թերի թողնելով գեղեցիկ երազներ ու նպատակներ:

Անգուր ճակատագիրը շրոջեց, որ նա ճաշակեր ու վաշելը կյանքի քաղցրությունները: Ապրում էր հարազատների ու ընկերների հոգսերով, ուրախանում ու տխրում էր ընկերների համար:



Մեզիկ է 1970 թ. սեպտեմբերի 17-ին կենդանանում: Սովորել է ավարակ է Վ. Տերյանի անվան N 15 միջն. դպրոցը: Նա չափից դուրս բարի, ընկերասեր և կարգապահ աշակերտուհի էր: Շատ էր սիրում եզգ ու երաժշտություն: Դպրոցին



ՀՈՎՀԱՆՆԵՍՍ ԻՌԻՐԻԿԻ ԽԱՉԱՍՏՅԱՆ

Ուրախ, ժպտերես տղա էր Հովիկը: Սիրված էր ընկերների, ուսուցիչների կողմից, չնայած դասերին խիստ աշխույժ էր պահում իրեն և հաճախ «արժանանում» ու-

խելուաշարժից տուժածներին օգնության առաջին ձեռք մեկնողները զինվոր - բժիշկներն էին: Աղետից ընդամենը մի քանի ժամ հետո արդեն կենդանանում էին Թրիլիսի զինվորական հոսպիտալի քրժիշկներն ու բուժքույրերը: Նը-

ՎԱՐՄԻՈՒՂԻ ԱՎԻՐԻՄ ՍԻՄՈՆՅԱՆ

զուգընթաց սովորել է ավարակ է սպայի տան երաժշտական դպրոցը: Լավ էլ պարում էր:

Դպրոցն ավարտելուց հետո նրան շահագրվեց ընդունվել բան և որոշեց զործի անցնել կարի N 2 արտագրական միավորումում: Կարճ ժամանակում հմտացավ և սիրեց իր աշխատանքը, ցուցաբերեց մեծ աշխատասիրություն, վայելեց ողջ կողակտի սերն ու հարգանքը: Մեղմ էր ու հեզ, պացիկ ու բարակիրան իմ Վարդուհին: Մազկանց միջին ծաղիկ էր իմ ժպտերես աղջիկը միակ: Չգիտեմ, նախախնամության մասն էր խառը, թե ինչ-որ անավար աղետից առաջ տ-

վորություն էր դարձել կրկրենի հանրաժանոր եզգի բառերը:

Որպես մի ծաղիկ հողից դուրս եկած կյանքին ժպտացիր, անցար-գնացիր...

Սիրելի դուրիկս, ի՞նչ էր վկայել հողից, ինչու՞ էիր կրկնում սիրա կեղեիկ այդ տողերը:

Մոռնովում է սիրես ու մղկտում իմ ծաղիկ աղջրկա, իմ կյանք ու արև դատրիկի համար: Պայծառ հիշատակովդ կամաճեմ վիբավոր հողիս, անեման իմ Վարդուհի:

ՍՈՒՍԱՆՆԱ Որդեկորույս մայր

Պ Ա Տ Կ Ա Մ Ը . . .

սուցիչների դիտողություններին: Ստացվեց այնպես, որ նա հիվանդացավ և 5 օր մեաց տանը: Գնկոմների 7-ին, երբ արդեն լավ էր գրում, մայր համոզեց դպրոց զնայ: Կարիքանյանի անվան N 9 դպրոցը, որտեղ սովորում էր պատանին, երկրաշարժի անեղ ցնցումներին չդիմակայեց ու փոյ եկավ: Նույն օրը երեկոյան Հովիկին հանեցին փառասակներից: Արտախոսասես ոչինչ չկար: Բայց պարզվեց, որ ռախերն էին կտրվել: Հասցրին հիվանդանոց: Այնտեղ պատանին եույնիսկ կատակեց: ԹՎ Կուկայանի, թե Ախալալի հիվանդանոցներում, որտեղ առաջին օգնությունը զույց տվեցին պատանուն, նա իրեն իսկական տղա-

մարդու պես պահեց, դիմա նալով ցավեցնող վերակապերին: Հետո տեղի բժիշկների հուղորհներով նրան տեղափոխեցին Թրիլիսի, ավելի օրակալ մասնագետների կողմից լննվելու համար: Այնտեղ հույս տվեցին ծրեողներին. ամեն ինչ լավ կլինի: Հաշտոլ օրը վերջապես հանգստացած ծնողները գնացին հիվանդանոց և... իմացան իրենց որդու կորստի բոքը: «Ազատը բարձրացավ... տխուր երկատեցին բժիշկները:

Գնկոմների 10-ին 14-ամյա Հովիկը կենեց իր մանկանացուն: Նրա վերջին բառերն էին. «Պապային կանչեմ, բան ունեմ հայտնելու...»: Այդպես էլ հայրը չհասցրեց լսել որդու պատգամը:

շատ ուրիշներ: Այդպիսի օրինակները հարյուրավոր են, որոնք վկայում են անմահարդասիրական մասնագիտության տեր մարդկանց խիզախության մասին: Աղետյալների կյանքի և առողջության համար մղվող պայքարը շարունակվում է: (ՏԱՍՍ)



Վ Ի Շ Տ Ս

Անասիի դժվար է մոր համար գրիչ վերցնել ու պատմել անտանձան վշտի, կարսված երջանկության, հավերժ 13 տարեկան իր արդժ մասին... ԱՐԱՅԻՎՍ (ԱՐԱ ՅԵՆՈՒՐԻ) ՊԵՏՐՈՍՅԱՆԻ սովորում էր N 9 միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում: Անեուն հրկվան էր ապրում, աս-



Տ Վ Ի Ս Ա Ր Ե Բ Ի Ն . . .

նելով, թե ինչպես էր հասակ առել, սիրունացել արդիս: Միշտ ժպտում էր, աշխույժ, բարեհամբույր, պատրաստակամորեն կատարում էր բոլորի խնդրանքը: Իմ աչքին էր զավակս, հոր՝ ասովածը, ավագ եղբոր օգնականը, Բոչ՝ ընկերուհին: Նաև լեհույ ու զգայուն սիրտ ուներ, ինքը երբեք



չէր վիրավորի դիմացիներն, իսկ վիրավորելու դեպքում կհաշվեր աշխից հեռու մի անկյուն, կսխառեր, բայց և մի քանի րոպե հետո վիրավորան էր մոռացած, մի փոքր խոնավացած աչքերով նախը կծպար: Աղետալի երկրաշարժի օրը որդիս չէր ուզում դրպրոց զնայ (հեռուստացույ-

ցով լավ կհեռեկար էին ցուցադրում), բայց, կարծես, շար բախտի դրդմամբ բույլ շտվեցի դասերից բացակայել: Երանի շուղաբեկի...

Այսօրվա պես հիշում եմ... Խոսկվան երեխայի նրման չուրբեր սեղմած անխոս հագնվեց, առանց ինձ ու հոր հետ մի բառ փոխանակելու դուրս եկավ տանից անվերադարձ... Սիրտս կան խագույնակում էր անավար զժքխախտություն: Իր հարագատ դպրոցում որդիս կրկեց իր մանկանացուն:

Բայց վիշտս մեռակ չմրնաց, այլ կրկնապատկվեց, եռապատկվեց, Բանի օր շուտով մեկ ուրիշ բոք էլ խորվեց բոլորիս սիրտը: Քանզվել էր եղբորս՝ Սպարտակ Կաժոյանի տունը՝ տակովն անելով կոռոչն ու որդուն: Կրկը՝ ԱՆԱՇԻՑ ԳԱՐԻԲԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ծնվել է 1954 թ., պատրաստվում էր դրպրոց ուղարկել իր օրդուն:

N 15 դպրոցի 4-րդ դասարանի աշակերտ ՏԻԳՐԱՆ ՍՊԱՐՏԱԿԻ ԿԱՅՈՒՅԱՆԻ: Երանի մի քանի րոպե շուտ օրդու ձեռքը բռնած դուրս եկած լինեք այդ տանից: Նրանց շիրկեց ոչ շանելությունը, ոչ անտանձան եռանդը, ոչ էլ կյանքի նկատմամբ ունեցած մեծ սերը:

Ամեն անգամ ձեզ այցի գալիս, իմ սիրելիներ, ձեզ ծաղիկներ եվիրելիս, ինձ բվում է, թե մի դաժան երազ է եղել այս դառն իրա կանությունը: Միշտ խաբում եմ ինձ՝ հավատալով, թե մի օր կրկին տեսնելու ու լսելու եմ ձեզ, արտախանայու եմ ձեզնով: Միայն այս հավատն է ինձ դեռ ստիպում ապրել այս աշխարհում:

Ասում եմ, վիշտը տվել են օտերիին, չեն դիմացել, դրա համար տվել են մարդուն:

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ



### Ս Ի Մ Ո Ն Յ Ա Ն Ն Ե Ր

Աղետը մի քանի վարկյա-  
նում ստակալի հումքը արեց,  
քաղում ընտանիքներ ամաչա-  
ցան, որբացան, արմատա-  
խիլ եղան, կան էր փրկվեց  
ընտանիքից միայն մեկը:  
Փրկվեց, որպեսզի անասկի  
վշտի բեռան տակ տնքա, որ-  
պեսզի ճաշակի անհուսու-  
թյան դառնությունը, որպեսզի  
խրվի հոգու խոռվի մեջ ու  
դիմի քախտին, ինչո՞ւ...

Ապրում է ընտանիքի հայ-  
րը՝ Սուրիկ Միտոնյանը, ապ-  
րում է միայն միջոցառումնե-  
րով: Համակրելի այդ երիտա-  
սարդը անգամ անձանոթի  
վրա մոզական ազդեցություն է  
գործում: Պրկված, լարված,  
կակիծը ասես սեղմված բը-  
ռունքներում պահած նա պայ-  
քարում է ինքն իր դեմ: Սպա-  
սել էր, մտածել, երկմտել և  
վերջապես որոշել էր հավեր-  
ժացնել նաև իր սիրելիների,  
իր գեղանի կնոջ ու բալիկնե-  
րի լուսանկարները՝ կեն-  
սագրական համառոտ տեղե-  
կություններով:

ՍԻՄՈՆՅԱՆ ՍԱՀԱԿԱՆՈՒԾ  
ՍՈՒՐԻԿԻ, ծնված 1978 թվա-  
կանի հունվարի 18-ին: Սո-

վորում էր Ղարիբջանյանի  
անվան դպրոցի 4 «ա» դա-  
սարանում: Աշխատասիրու-  
թյան և առաջադիմության շը-  
նորհիվ նրա լուսանկարը իր  
մշտական տեղն ունեցավ գե-  
րազանցիկների պատվո տախ-  
տակին: Վայելում էր համա-  
դասարանցիների սերն ու հա-  
մակրանքը: Տեսնելով նրա  
ակտիվությունը, ուսուցչուհի-  
ները ասում էին. «Սահականու  
շը իր ընտանիքի հայելին է,  
երևում է, որ նա տնային  
լուրջ դաստիարակություն է  
ստանում»: Նա դպրոցում և  
մանկավարժների աչքում ար-  
դեն նախաձեռնողի ու ապա-  
զա կազմակերպչի վատ օրի-  
նակ էր տալիս: Միտում էր  
Սահականուշիկը նկարչությունը:  
Նկարում էր վատ երևակալու-  
թյամբ, նուրբ դիտողականու-  
թյամբ: Ամեն նորը, որ տես-  
նում էր նա իր շուրջը, արտա  
հայտվում էր նրա նկար-  
ներում: Շատ քան էլ ընդ-  
օրինակում էր մորից: Մի-  
րում էր շքեղազարդ, իսկ ծովը  
նրա սերն էր, նրա հոբբին:

Այն դժնի օրվա նախօրյա-  
կին նա զույգ հինգերով վերա-

դարձավ տուն: Եղբոր ծնունդն  
էին նշելու: Լույս էր կաթում  
աղջկանից և ձգտում էր նա  
դնայի լույսը, ինչպես թիթեղը:  
Եվ թիթեղիկի նման կարճ  
կյանք ունեցավ: Իր ծո-  
ղովորի համար նա ան-  
պայման լավ մարդ կդառնար:  
Իսկ որքան բուռն էր լավի այդ  
ցանկությունը: Գուցե նա  
ողջ մնար, Սուրիկ հոր հետ  
լիներ Ռիմա, եթե միայն դա-  
սամիչոցի զանգը 20 րոպեով  
շուտ գար, քան դեկտեմբերի  
7-ի այդ սարսափիկ, դավա-  
դիր աղետի սուրահանդակ անդ  
րանիկ վայրկյանը: ՍԻՄՈՆ-  
ՅԱՆ ՀԱՅԿՈՒԾ ԱՐՏՈՒԾԻ՝  
ծնված 1956 թվականի փե-  
տրվարի 28-ին, աշխատավորի  
նտանիքում:

Հայկուշը ավարտել էր №  
21 դպրոցը և աշխատանքի  
ընդունվել գոշպաշտպանների  
կոնկետիվում: Կյանքը կապեց  
ձեռնարկության հետ, ամուս-  
նացավ, ծնեց երկու երեխա-  
ներ և իրեն անմնացորդ  
կերպով նվիրեց ընտանի-  
քին, երեխաներին, նրանց  
դաստիարակությանը: Անհամ-  
բեր էր, բոլոր ձգտումներ ու-  
նեք և մարտում էր իր երազ-  
ները իրականացնելու համար:  
Նրան հաջողվեց հաս-

նել այն ամենին, ինչը մարդ-  
կությունը համարում է բախ-  
տավորություն: Նա սիրում էր  
կյանքը, իր ամեն ինչով, լույս  
ու ստվերով, սիրում էր բը-  
նությունը, իր երեխաների  
հետ հազար ու մի երազներ  
էր կապում: Զվարթ էր բնա-  
վորությամբ, խինդն ու ծիծա-  
ղըն էին նրա անբաժան ուղե-  
կիցը ընտանիքում ու կոնկե-  
տիվում: Զգայուն էր ուրիշի  
հոգսի ու վշտի հանդեպ, ա-  
մենահաղթ էր, բոլորի համար  
լավ գրուցակից էր: Եվ հա-  
պաղեց, իսկ հաշվված վայր-  
կյանքերը շտապեցին հաշվի-  
հարդար տեսնել այդ լիաթոք  
կյանքով ապրող հետաքրքիր  
անձնավորության հետ, որի  
բարի նպատակները կիսատ  
մնացին: Նա հեռացավ ան-  
տեղյակ այն բանից, որ իր փայ-  
փայլած ծաղկանոցը ամառի  
անսպաս դարձավ, իսկ սի-  
րած ամուսինը՝ կիսամարդ:  
Դաժան է ասված: Սակայն չէր  
ուզի. Հայկուշը տեսնել Սուրի-  
կին այսպես վհատված, այդ-  
պես ընկճված: Կիսարվեր նը-  
րան և կախարդական խոսքեր  
կշռնջար նրա ակամեջին. «Ապ-  
րիր, լավ եղիր, չէ՞ որ դու  
մեր բոլորի տեղն ես ապրում:  
Մենք՝ մեռնողներս էլ սիրում  
ենք, երբ մեզ այցի են գալիս,  
երբ հիշում են մեզ, ծաղիկ-  
ներ են քրտում, մտովի խոսում  
են մեզ հետ իբրև ողջերի:  
Աշխատիր, կյանք մտիր և  
ժպտա կյանքին, այդ մենք ենք  
երաշխավորում, քեզ ամենից  
շատ սիրողներս: Լսո՞ւմ ես,  
այդ մենք ենք ուզում ես, Սա-  
հականուշիկը, Յուրիկը: Դու  
պետք է ապրես ու լինես ա-  
ողջ և հպարտ, ստանց խեղ-  
ճանալու: Պետք չէ...»:

ՍԻՄՈՆՅԱՆ ՅՈՒՐԻԿ ՍՈՒ-  
ՐԻԿԻ—ծնված 1980 թվականի  
դեկտեմբերի 8-ին: Սովորում  
էր Ղարիբջանյանի անվան №  
9 դպրոցի երկրորդ դասա-  
րանում: Ընդունակ էր, օժտ-  
ված և միաժամանակ ծիր ու  
սիրելիորեն աշխույժ մի տղա:  
Գերազանցիկ էր: Բայց ամեն-  
քի ուշադրության կենտրոնում  
էր ոչ այն քանի համար, որ  
միայն հինգեր էր ստանում,  
այլ ընկերական միջավայրում  
իր հետաքրքիր ու ամենքին  
հաճելի էությամբ: Յուրիկը  
շատ հետաքրքրասեր էր և  
դա այնքան անմիջական էր  
դրսևորվում նրա մոտ, որ սը-  
ղային անտարբեր մաղել չէր  
լինի: Միովամ էր բոլորի կող-  
մից:

Ընդամենը մեկ օր չքավա-  
կանացրեց նրան, որ նշեր իր  
8-ամյակը: Այդ նշանավոր  
ընտանեկան իրադարձությա-  
նը մեծ շուքով էին նախա-  
պատրաստվել: Նախորդ օրը  
հրավերի հեռախոսազանգե-  
րով էին գրառված, երբ պլես  
վեցին ավերիչ ցնցումները: Կը  
տըրվեց Յուրայի կյանքի թե-  
լը մայրական գրկում, ողջա-  
գուրված: Նույն պահին ըն-  
տանիքի հայրը հայտնվեց  
գույգրա-նասկեղենի միավոր-  
ման փլատակների մեջ՝ ջախ-  
ջախված, անգիտակից, ան-  
տեղյակ վիճակում, որ հետո  
զոհն հուշերը վատ պահեր:  
Եվ փլատակներից համբարձ-  
ված հայրը՝ Սուրիկը, Աստծո  
լույսից զրկված իր ընտանի-  
քին ասում էր մտովի. «Աստծո  
լույսն ընդ մեզ, հարազատ-  
ներս: Անողոր էր բնությունը  
մեր հանդեպ, մնաս քարով  
չեղանք զոհն իրար հետ»:



ՄՆԱՅ ԱՃՈՍԱՏԱՏԵՂՈՒՄ  
ՀԱՅԿԱՆՈՒԾ ԲԱՂԴԻԿԻ  
ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ ծնվել է 1968  
թ. մարտի 8-ին, Լեհիճականում:  
1974-75 ուստարում ընդունվել  
է Հակոբյանի անվան միջնա-  
կարգ դպրոց: Այս կրթօջա-  
խում Հայկանուշը ուսանել է  
իր 4 քույրիկների հետ:  
Ուսուցչուհիների սիրված ա-  
շակերտն էր: Այնուհետև ու-  
սումը շարունակել է № 42  
պրոֆտեխտումնարանում: Ու-  
սումնառությունից հետո աշխա-  
տել է «Էլեկտրոն» գործարա-  
նում:  
Աղետի պահին եղել է գոր-  
ծարանում և այնտեղ էլ մնա-  
ցել: Երկար փնտրելուց հետո  
հարազատները նրան գտան  
«Ծիրակ» գերեզմանոցում: